ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Հանրային Քաղաքականության Հետազոտությունների Կրթաթոշակներ ծրագիր 2020թ.

Covid-19 համաճարակին գիտահետազոտական արձագանքի անհրաժեշտությունը

Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանը (ԲՀՀ - Հայաստան) աշխատում է Հայաստանում սեփական քաղաքացիների առջև պատասխանատու, ժողովրդավար, հաշվետու կառավարություն ունենալու և կենսունակ ու հանդուրժող հանրություն կառուցելու ուղղությամբ: ԲՀՀ - Հայաստանի ուշադրության կենտրոնում են մարդու իրավունքների, կառավարման թափանցիկության, արդարադատության հասանելիության, քաղաքացիական հասարակության աջակցման և սոցիալական ներառման հարցերը: Բաց և բազմակարծիք հանրության մարտահրավերներին արձագանքելու, ինչպես նաև իրավասու և ուժեղ քաղաքացիական հասարակություն ձևավորելու միտումով՝ ԲՀՀ - Հայաստանը հայտարարում է 2020թ. քաղաքականության հետազոտությունների կրթաթոշակներ ծրագրի անհատական դրամաշնորհների արտակարգ մրցույթ պայմանավորված Covid-19 համաճարակին գիտահետազոտական արձագանքի ձևավորման անհրաժեշտությամբ:

Ծրագիրն աջակցում է հետազոտողներին Հայաստանի առջև ծառացած քաղաքականության առավել վճռորոշ մարտահրավերների բացահայտման, կիրառական լուծումների մշակման և ջատագովությանն ուղղված գործուն քայլեր ձեռնարկելու նպատակով: Հանրային քաղաքականության հետազոտությունների միջոցով ծրագիրը նպատակ ունի զարգացնել անհատ հետազոտողների հանրային կյանքի տարբեր ոլորտներում գործընթացների վրա ազդելու կարողությունները, նպաստել հետազոտողների, քաղաքացիական հասարակության և պետական մարմինների միջև ակտիվ և առավել որակյալ համագործակցային մշակույթի ձևավորմանը՝ զարգացնելով հանրային քաղաքականության հետազոտության և վերլուծության վրա հիմնված երկխոսությունը:

ՈՎ ԿԱՐՈՂ Է ԴԻՄԵԼ

Ծրագիրը բաց է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, բուհերի դասախոսների, հանրային քաղաքականության ոլորտի հետազոտողների, վերլուծաբանների, փորձագետների և խորհրդատուների համար: Հայտերի ներկայացման նախապայմանն է՝ նվազագույնը մագիստրոսական կրթություն հանրային կառավարման, քաղաքականության, քաղաքագիտության կամ սոցիալական այլ գիտությունների՝ իրավագիտության, տնտեսագիտության, միջազգային հարաբերությունների կամ համանման բնագավառներում: Հանրային քաղաքականության վերլուծության, ինչպես նաև շահերի պաշտպանություն

իրականացնելու փորձը ցանկալի է, հետազոտական աշխատանքների համար անհրաժեշտ գրավոր հմտությունների առկայությունը՝ խիստ գերադասելի: Դիմորդները պարտավոր են էական ժամանակ հատկացնել առավելագույնը հինգ ամիս տևող նախագծի իրականացմանը: Հայտերը ընդունվում են անհատների (հեղինակ) կամ անհատների խմբերի (երկու համահեղինակներ) կողմից:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Դիմորդներից ակնկալվում է Հայաստանի առջև ծառացած մարտահրավերների[1] շրջանակում կոնկրետ խնդիրների բացահայտում և ձևակերպում, հանրային քաղաքականության հետազոտության իրականացում՝ տարբեր ոլորտներում քաղաքականության խնդիրները կամ մտահոգությունները հանրայնացնելով և դրանց համար լուծումներ առաջարկելով: Կրթաթոշակառուներից ակնկալվում է ձևակերպել փաստավորված խնդիրներ, բարեփոխումների ու դրանց իրականացման վերաբերյալ հարցադրումներ, կիրառել համապատասխան մեթոդաբանական գործիքներ և առաջարկել ապացույցների վրա հիմնված եզրակացություններ ու առաջարկներ: Ուսումնասիրության արդյունքում ակնկալվում է, որ կրթաթոշակառուները ներկայացնեն պարզ, իրագործելի ու թիրախավորված առաջարկներով քաղաքականության հետազոտության փաստաթուղթ[2] և քաղաքականության վերլուծության համառոտագիր:

Կրթաթոշակառուներից ակնկալվում է իրենց հետազոտության վերաբերյալ ջատագովության պլանի մշակում և դրա իրականացմանն ուղղված պահանջվող ժամանակի տրամադրում: Գործողությունները կարող են ներառել հանդիպումներ ու քննարկումներ տվյալ ոլորտի պատասխանատուների հետ, հանրային քննարկումներին մասնակցություն, ինչպես նաև հանրային հաղորդակցման տարբեր ձևաչափերում նեգրավվածություն՝ տվյալ հանրային քաղաքականության զարգացումների վերաբերյալ տեղեկացված ու հետևողական լինելու միտումով: Ակնկալվում է, որ կրթաթոշակառուն ինքնուրույն հանձն կառնի իր հետազոտության ջատագովության իրականացումը:

ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Դիմորդները պետք է լրացնեն ծրագրի ներկայացման ու գնահատման համար նախատեսված հանրային քաղաքականության հետազոտությունների կրթաթոշակներ 2020թ. ծրագրի հայտի ձևը:[3]

Բոլոր դիմորդները կտեղեկացվեն մրցույթի արդյունքների մասին՝ հայտը ներկայացնելու վերջնաժամկետից ***յոթ շաբաթների ընթացքում***: Առաջին փուլն անցած դիմորդները հնարավոր է հրավիրվեն հարցազրույցի:

---

[1] Դիմորդները կարող են ձևակերպել խնդիրներ՝ հիմնվելով, բայց չսահմանափակվելով, Հավելված 1-ում (էջ 4) առաջարկվող թեմատիկ ոլորտների շուրջ:

[2] 10,000 բառի սահմաններում

[3] Հավելված 2 (էջ 7)

ԲՅՈՒՋԵ

Կրթաթոշակառուները կստանան անհատական դրամաշնորհներ մինչև $3,000 (ԱՄՆ դոլար) հետազոտության ծախսերը հոգալու նպատակով:

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ՈՒ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ԲՀՀ - Հայաստանը աջակցում է կրթաթոշակառուների հանրային քաղաքականության վերլուծության կարողությունների զարգացմանը: Կրթաթոշակառուները մասնակցում են հանրային քաղաքականության վերլուծության կարևորության, խնդիրների ձևակերպման, հետազոտական մեթոդաբանության և ջատագովության հաջողված փորձերի վերաբերյալ դասընթացին: Կրթաթոշակառուներից ակնկալվում է իրենց փորձառության ներդնում ու ակտիվ մասնակցություն ԲՀՀ - Հայաստանի և այլ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից պարբերաբար կազմակերպվող հանրային քննարկումներին ու հանդիպումներին:

ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Հետաքրքրված անձինք պետք է ներկայացնեն՝ հետազոտության առաջարկների հայտը (հավելված 2) և ռեզյումե (պարտադիր), ինչպես նաև նախկինում իրականացրած հետազոտության նմուշ կամ հղում (ցանկալի) հետևյալ էլ. հասցեին **register@osi.am** մինչև 2020թ.

ՀՈՒԼԻՍԻ 20-ը, ժամը 17:00-ը

Հայտերը ներկայացվում են էլեկտրոնային տեսքով:

Հայտը ուղարկելուց հետո, մինչև երկու աշխատանքային օրերի ընթացքում դիմորդները կստանան հաստատող նամակ հայտի ստացման վերաբերյալ: Նամակը չստանալու դեպքում, խնդրում ենք կապ հաստատել մեզ հետ:

Վերջնաժամկետից հետո ստացված հայտերը չեն դիտարկվում**:**

Հարցերի կամ լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել հանրային քաղաքականության հետազոտությունների կրթաթոշակներ ծրագրի համակարգող՝ Վալենտինա Գևորգյանին՝ valentina@osi.am

Հավելված 1

ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲՀՀ - Հայաստանի հանրային քաղաքականության հետազոտությունների կրթաթոշակներ ծրագրի

Covid-19 համաճարակին գիտահետազոտական արձագանքի անհրաժեշտությունը

Այսօր **Covid-19 համաճարակը** գտնվում է աշխարհի ուշադրության կենտրոնում: Համաճարակի արդյունքում պետությունների քաղաքական ռազմավարությունների առաջնագծում հայտնվեցին հենց առողջապահական ոլորտն ու խնդիրները: Համաճարակն ի ցույց դրեց բազմաթիվ երկրների նմանատիպ ճգնաժամերին դիմակայելու անզորությունը: Իրավիճակը վերահաստատեց հանրային կյանքի մի շարք ոլորտների կարիքներին պատշաճ ու ժամանակին արձագանքելու քաղաքական ղեկավարության ու որոշումներ կայացնողների պատասխանատվության և պատրաստվածության անհրաժեշտությունը:

Պետությունների առջև առողջապահական բազմաթիվ մարտահրավերներից զատ, իրավիճակը նաև հանգեցրել է կառավարման ստվարաթիվ խնդիրների: Համաճարակին հակահարվածելու անհրաժեշտության, բայց նաև անպատրաստ կառավարման արդյունքում, տարբեր երկրներ բարձրաձայնում են և միջոցներ կիրառում ի հայտ եկած առավել ցայտուն համակարգային անհավասարությունների դեմ: Հանրային կյանքի տարբեր ոլորտների արդյունավետ կառավարումն ապահովելու համար, գրեթե ամենօրյա ռեժիմով բազմապատկվող խնդիրները պահանջում են գիտական մոտեցումներով ձևավորված լուծումներ:

Ճգնաժամային իրավիճակում գիտության, գաղափարների ու արժեքների ընտրությունը, և այդ ընտրության վրա հիմնված քաղաքականությունների ձևակերպումը հանդիսանում է թերևս ամենակարևոր մարտահրավերը: Տարօրինակ կերպով, հենց ճգնաժամային իրավիճակներում է, որ գիտությունը հաճախ պարտություն է կրում ստեղծված պայմաններին արագ արձագանքելու ցանկությունների, անպատրաստ ու շտապողական որոշումներ կայացնելու հետևանքով: Արդյունքում գրանցվում են տարբեր ոլորտների գործունեության ձախողումներ ու հանրային քաղաքականության մշակման ու կառավարման այլ գործընթացների հանդեպ քաղաքացիների վստահության անկում:

Համաճարակով պայմանավորված իրականությանը պատշաճ արձագանքելու համար անհրաժեշտ են դառնում գիտական միտքն ու դրա կիրառումը հանրային քաղաքականության մշակման գործում: Քաղաքական առաջնորդների ու ղեկավարների նախաձեռնողականությունը արտակարգ իրավիճակներում պետք է

արտացոլվի նախևառաջ հանրային քաղաքականության մշակման մոտեցման մեջ՝ առաջնահերթություն համարելով հանրային կյանքի տարբեր ոլորտներում գիտական մտքի հիման վրա խնդիրներին արձագանքելու կամքն ու կարողությունը: Ճգնաժամային պայմաններում որոշումների կայացման գործընթացները, դրանց նպատակներն ու դրդապատճառները, գաղափարական ու փորձագիտական հիմքերը, մշակման եղանակներն ու իրագործելիությունը, հաղորդակցման ու հանրայնացման մեխանիզմները պահանջում են հետազոտական մոտեցում և պատասխաններ:

ԲՀՀ - Հայաստանի հանրային քաղաքականության հետազոտությունների կրթաթոշակներ ծրագիրը նպատակ ունի նպաստել Հայաստանում հանրային քաղաքականության վերաբերյալ որոշումների կայացման գործընթացներում գիտական մտքի, գիտական մոտեցման և դրանց արդյունքում քաղաքականության ձևակերպման կարողության, արժեքի ու դերի բարձրացմանը:

Covid-19 համաճարակով պայմանավորված խնդիրների շրջանակում
հետազոտական աշխատանքները կարող են վերաբերել (բայց չսահմանափակվել)
ՀՀ-ում հետևյալ ոլորտներին ու ենթաոլորտներին՝

- **Առողջապահության** հասանելիության, մատչելիության խնդիրներ, համակարգի աշխատողների գիտելիքներ, արագ արձագանքման ու այլ կարողություններ, վերաբերմունք և ընկալումներ, հոգեբուժական և այլ **փակ ու կիսափակ հաստատություններում** հանրային առողջության, արտակարգ իրավիճակի ու ճգնաժամային կառավարման և առողջապահության գնումների ու վերահսկողության խնդիրներ, ոլորտում հաղորդակցման ու տվյալների կառավարման խնդիրներ,

- **Արդարադատության** հասանելիության ու մատչելիության խնդիրներ, ներառյալ դատական համակարգը, իրավապահ, քննչական ու դատախազական մարմինները, սահմանադրական բարեփոխումներ, փակ ու կիսափակ հաստատություններ, անցումային արդարադատություն, քաղաքացիական վերահսկողություն,

- **Ապատեղեկատվություն** ու քարոզչական մեխանիզմներ և ուղիներ, քաղաքական տրամաբանության, կեղծ լուրերի և տեղեկատվական հոսքերի, մեդիա գրագիտության, կիբեր անվտանգության և անձնական տվյալների պաշտպանության, փաստերի ստուգման մեթոդներ,

- **Տնտեսական և սոցիալական արդարության** խնդիրներ, ներառյալ շուկայի հասանելիության, շահերի բախման, մենաշնորհների, տնտեսական մրցակցության վերաբերող հարցեր,

- **Կառավարման հաշվետվողականության**, **թափանցիկության** և կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ խնդիրներ, ներառյալ հակակոռուպցիոն բարեփոխումների օրակարգը, հակակոռուպցիոն մարմինները, պետական գնումների համակարգը,

- **Կրթություն**, կրթության որակի ապահովման մեխանիզմներ, իրավահավասար և ներառական քաղաքականության երաշխիքներ կրթական համակարգի բարեփոխումների գործընթացում, կրթության բարեվարքության, ակադեմիական բարեվարքության, ազատության խնդիրներ,

- **Մարդու իրավունքների**, խտրականության և հիմնարար ազատությունների ենթատեքստում՝ սոցիալական արդարության, աշխատանքային իրավունքների, արդարադատության մատչելիության, արդար դատավարության, խտրականությունից, խոշտանգումներից և վատ վերաբերմունքից զերծ լինելու, ընտանեկան բռնության, փոքրամասնությունների և մարգինալացված խմբերի վերաբերյալ խնդիրներ,

- **Տեղական ինքնակառավարում**, ՏԻՄ-երի կառավարման և պատրաստվածության հարցեր, ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների կատարման, ռեսուրսների կառավարման, որոշումներ ընդունելու գործընթացների մարդու իրավունքների տեսանկյունից գնահատման վերաբերյալ խնդիրներ,

- **ԵՄ-Հայաստանի միջև Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի** (ՀԸԳՀ) օրակարգը փոխլրացնող խնդիրների և կառավարության գերակայությունների՝ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության, դատա-իրավական բարեփոխումների ռազմավարության, կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարության և այլ ազգային ռազմավարություններում սահմանված գերակա խնդիրների վերաբերյալ հետազոտություններ:

Հավելված 2 Հայտի ձև

ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՀՀ – Հայաստանի հանրային քաղաքականության հետազոտությունների կրթաթոշակներ ծրագրի

Covid-19 համաճարակին գիտահետազոտական արձագանքի անհրաժեշտությունը

Հայտի ձևի նպատակն է հեշտացնել հետազոտական առաջարկների ընդունման գործընթացը և մատնանշել բոլոր այն հիմնական հարցերը, որոնց անհրաժեշտ է պատասխանել: Նշված բառային նվազագույն-առավելագույն սահմանափակումները նախատեսվել են որպես հետազոտական առաջարկի մշակման գործընթացը հեշտացնող չափանիշներ, որոնք ակնկալվում է պահպանել: Հետազոտական առաջարկը պետք է ներկայացնել պարզ ու հստակ:

1. Նախագծի վերնագիր և համառոտ բնութագիր Առաջարկի համառոտ բնութագիր՝ ի՞նչ եք ուզում ուսումնասիրել, ի՞նչն է ձեզ դրդել հանրային քաղաքականության նման հետազոտության իրականացմանը, որքանո՞վ է ձեր առաջարկած թեման արդիական ու կապված ներկայումս ընթացող բարեփոխումների գործընթացների հետ: (150-300 բառ)
2. Խնդրի նկարագրություն և հետազոտության հիմնավորում Սահմանեք հանրային քաղաքականության խնդիրը և նշեք, թե ինչ նպատակ եք հետապնդում ձեր քաղաքականության ուսումնասիրության միջոցով: Որո՞նք են խնդրի լուծման նորույթը, արդիականությունը և հրատապությունը: Ինչպիսի՞ ազդեցություն ունի խնդիրը այսօր հայ հասարակության վրա: Որո՞նք են հանդիսանում ուղղակիորեն և անուղղակիորեն ներգրավված շահագրգիռ կողմերը, խնդրի վրա ազդող գործոններն ու թիրախները: Ներկայացրեք հիմնախնդրի բնույթն ու համատեքստը և ձեր հետազոտության արդյունքում ակնկալվող ներդրումը՝ խնդրի լուծման վերաբերյալ: (850-1200 բառ)
3. Հետազոտական հարցեր Հարցերի տեսքով՝ ներկայացրեք ձեր գլխավոր և ենթա-հետազոտական հարցերը: Ի՞նչ հարցերի եք փորձում պատասխանել ձեր հետազոտության օգնությամբ: (80-100 բառ)
4. Այլընտրանքային հանրային քաղաքականության գնահատում Ներկայացրած հանրային քաղաքականության խնդրի և հետազոտական հարցերի շրջանակում, նկարագրեք հնարավոր այլընտրանքային/գերադասելի քաղաքականության ուղղությունները: Ներկայացրեք պատճառաբանությունը թե ինչու է(են) ձեր կողմից առաջարկվող այլընտրանքը(ները) առավել գերադասելի: Գնահատեք ներկայացրած հանրային քաղաքականությունը՝ տվյալ խնդրի և ոլորտի մասին անհրաժեշտ ու պատշաճ գիտելիքի ու վերլուծության ներկայացման նպատակով: (300-400 բառ)
5. Հետազոտական պլան և մեթոդաբանություն Հստակ նկարագրեք ձեր հետազոտության պլանը և նշված հետազոտական հարցերին պատասխանելու համար մշակված մեթոդաբանությունը (ներառյալ յուրաքանչյուր մեթոդի նկարագրությունը, հետազոտության մասնակիցները, վերլուծության տեսակները և այլն): Մատնանշեք հնարավոր դժվարություններն ու դրանք հաղթահարելու նախատեսվող ուղիները: (300-400 բառ)

6. Արդյունքներ

Նկարագրեք հետազոտության արդյունքները՝ մշակված նյութերի տեսքով (օր.՝ քաղաքականության վերլուծության փաստաթուղթ, համառոտագիր, գիտաժողովի նյութ, տվյալների բազա, ուղեցույց, տեղեկատվական թերթիկ, ինֆոգրաֆիկա, աուդիո կամ վիդեո նյութեր և այլն: (80-150 բառ)

7. Հետազոտության արդյունքների շուրջ ջատագովության ռազմավարություն

Ինչպե՞ս եք տեսնում Ձեր հետազոտության արդյունքների ազդեցությունը: Ի՞նչ ռեսուրսներ կամ գործիքներ պետք է օգտագործել հետազոտության ազդեցությունը առավելագույնի հասցնելու համար: Ներկայացրեք հետազոտության արդյունքների շուրջ ջատագովության ռազմավարությունը: Ի՞նչ ռիսկեր կարող են ծագել ջատագովության ռազմավարության իրագործման գործընթացում: (400-700 բառ)

8. Ժամանակացույց

Նշեք Ձեր նախագծի պլանավորած գործողություններն՝ ըստ դրանց իրականացման ժամանակի: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ նախագիծը պետք է իրականացվի առավելագույնը հինգ ամսիսների ընթացքում:

9. Բյուջե

Ստորև աղյուսակի օրինակով ներկայացրեք բյուջեի բոլոր ծախսերը, որոնք կարող են ներառել դաշտային հետազոտությունների հետ կապված ծախսեր, հոնորարներ, տրանսպորտային ծախսեր, հետազոտության հրատարակման, ներկայացման, տարածման և այլ անհրաժեշտ ծախսեր: Առաջարկի բյուջեն չպետք է գերազանցի $3,000 ԱՄՆ դոլարը: Բյուջեն ներկայացնել ԱՄՆ դոլարային ($) արժույթով:

1.	*բյուջետային տող*	*չափի միավոր*	*քանակ*	*միավորի արժեք ($)*	*ընդամենը ($)*
2.					
3.					
4.					
	ընդամենը ($):				